

ՔՆՆԱԳԼՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՅՆԵԼԹՈՍՈՒԹԻՒՆ

«Chants populaires arméniens», traduction française par Archag Tchobanian.
Préface de Paul Adam. Paris, 1903.

«Հայ ժողովրդական երգեր», Ֆրանսերէն Թարգմանութիւն Արշակ Չոպանեանի.
Պօլ Ադամ-ի յառաջարանով. Պարիզ, 1903:

Bibliothèque arménienne (Հայկական գրադարան) վերնա-
գերի տակ պ. Արշակ Չոպանեան ձեռնարկել է Պարիզում մի
շարք հրատարակութիւնների, որոնցով նպատակ ունի ծանօթա-
ցնելու եւրոպական՝ և մասնաւորապէս ֆրանսիական հասա-
րակութիւնը մեր անցեալի և ներկայի, մեր կեանքի և մեր
գրականութեան հետ: Մենք միշտ սիրով ենք արձանագրել պ.
Չոպանեանի այդ կարգի (և յատկապէս այդ կարգի !) աշխա-
տանքների իւրաքանչիւր արդիւնքը այն պարզ մտածումով, որ
նրա ընտրած միջոցը լաւագոյնն է հայ ժողովրդին պատուաւոր
ձեով ներկայացնելու օտարներին: Նրա գործը ըստ ամենայնի
գնահատելի է, եթէ աչքի առաջ ունենանք, որ ժողովուրդների
հոգևոր կեանքի փոխադարձ ծանօթութիւնը, նրանց արցունքն
ու ծիծաղը, նրանց յոյսերն ու երազները շատ ազնիւ նիւթ են
լցնելու համար այն անջրպետը, որ բաժանում է տարբեր ցե-
ղերն ու ազգութիւնները, որ հնարաւոր է դարձնում ցաւալի
անտարբերութիւնը դէպի ծանր ճակատագիրը հեռաւոր հորի-
զոնների տակ:

Տասն-տասեկինգ տարի առաջ Եւրոպան հայերին կա-
րելի է ասել ընաւ չէր ճանաչում: Վերջին ժամանակների
հայկական սարսափների շնորհիւ հայերը շատ մեծ ուշադրու-
թեան առարկայ դարձան, նրանց ճանաչեցին Եւրոպայում.
բայց դա վերին աստիճանի միակողմանի և մեր ցեղի արժա-

Նապատուութիւնը շոյելուց հետո մի ծանօթութիւն է: Յարգանք և համակրութիւն վաստակելու համար բարեմիտ օտարների մօտ բաւական չէ, որ մի ազգ քրիստոնեայ է և կոտորուած է... անհրաժեշտ է հրապարակ զալ հոգևոր և մարմնաւոր կարողութիւնների ամբողջութեամբ, քաղաքակրթական այն փառաւոր սկզբունքներով, որոնք մի ժողովրդի կենսունակութեան իսկական ապացոյցներ են: Ահա այս տեսակէտից պ. Չոպանեանի ձեռնարկութիւնը արժանի է աւանձին քաջակերութեան և ուշադրութեան:

Հայ ժողովրդական երգերի ներկայ թարգմանութիւնը պարունակում է XI բաժին—սիրային, հարսանեկան երգեր, օրօրներ, աղօթքներ, ռազմական երգեր, թաղման ողբեր կային, թուով երեք հարիւրից աւելի. մեծաւ մասամբ ընտրուած են Վանի, Ակնի, Զաւաթքի, Մուշի, Նոր-Նախիջևանի, Մոկաց երկրի, Ալաշկերտի և Զէյթունի երգերից. ժողովածուն բաւական հարուստ է, բայց և այնպէս ցաւալի է տեսնել, որ նրա մէջ տեղ չեն բռնել Նրեանեան նահանգի՝ Էջմիածնի և Սուրմալու գաւառների երգերից և յատկապէս Կողբ աւանի հայ աղջիկների բանաստեղծական խանդի սքանչելի արտադրութիւնները: Գրքին կցուած իր ընդարձակ ներածման մէջ, որ իդէպ է ասել յաջող է կազմուած, պ. Չոպանեան հայ ժողովրդական երգերի հեղինակների մասին խօսելիս՝ թուով է թէ անգիտանում է հայ աղջիկներին, որովհետեւ նա ծանրացել է յատկապէս հայ աշուղների վրայ: Յայտնի է սակայն, որ Արարատեան դաշտում—Մասի ստորոտներում և Մայր-Արաքսի ափերում ժողովրդական երգերի—և յատկապէս սիրային երգերի հեղինակները հայ գիւղացի աղջիկներ են, այն գողտրիկ բանաստեղծուհիները, որոնց արցունքն ու ծիծաղը հաւասարապէս հմայիչ են իրանց պարզութեամբ, իրանց անարուեստ՝ բայց դիւթիչ լիրիզմով: Մի կողմ թողնենք սակայն այն հարցը, թէ մինչև որ աստիճան ներկայ ժողովածուն քանակի և որակի՝ այսինքն ընտրութեան տեսակէտից կատարեալ է: Հընարաւոր է, որ պ. Չոպանեան ձեռքի տակ չունենար մեր ժողովրդական բանաստեղծութեան շատ գոհարներ, որ նա ստիպուած լինէր, գուցէ զուտ անձնական հանգամանքների պատճառով, սահմանափակ ծաւալի մէջ դնել իր ժողովածուն: Զբ խօսենք նաև թարգմանութեան հարազատութեան մասին, որովհետեւ ինքնըստինքեան արևելքի երգը արևմուտքին հասկացնելը արդէն մի բաւական ծանր խնդիր է և գուցէ որոշ յապաւումներ կամ օժանդակ բառերի յաւելումներ անխուսափելի են հղել:

Այս հանգամանքները այնուամենայնիւ չեն նսեմացնում գործի արժէքը գրական և մանաւանդ հասարակական տեսակէտից: Թերթելով այս հատորը ծայրէիծայր՝ մարդ գալիս է այն վերին աստիճանի մխիթարիչ եզրակացութեան, որ օտարը՝ ինչքան և նա նախապաշարուած լինի դէպի մեր ցեղը, չի կարող չխոստովանել այս երգերի կարևոր արժէքը հայ ժողովրդի ազգային առաքինութիւնների, նրա հոգևոր և մտաւոր բարձր կարողութիւնների տեսակէտից: Մի վերին աստիճանի պարարիչ շունչ է փչում բոլոր այդ լացող, ծիծաղող, աղօթող ու բողոքող շրթունքներից: Այս երգերի մէջ հայ մարդը հրապարակ է գալիս իր դարաւոր գոյութեան առեղծուածով, իր ուժեղ ընտանեկան և անհատական առաքինութիւններով, իր այն գեղեցիկ ու հպարտ յամառութիւնով, որ նրան կպած է պահում իր մայրենի հողին, ինչպէս երեսան մօր կրծքին, այնտեղից ծծելու կենսական եռանդը, քաղաքակրթական մեծ գործի համար ապրելու, յարատեւումն հատնում, տրտանեան տենչը: Ինչքան և ֆրանսիական թարգմանութեամբ այս երգերը կորցըրած լինին իրանց երաժշտականութիւնը, որ ժողովրդական բանաստեղծութեան անբաժան զարդն է, այնուամենայնիւ թող կարդան այդ գիրքը օտարները և թող տեսնեն հայ ժողովրդի հոգին իր կատարեալ մերկութեամբ: Այդ չարատանջ հոգին... որ քարերի տակ գալարուող, ծամուող բոյսի նման դարձեալ մի կերպ աշխատում է ձգուել դէպի լոյսը, դէպի արևի ջերմացուցիչ շողերը: Սէր դէպի մայր բնութիւնը, դէպի մայր հողը, շուրջ, դէպի այն ամենը, ինչ կեանքի իսկական փայլն ու գեղեցկութիւնն են կազմում, ահա մօտաւորապէս այդ երգերի իմաստը, նիւթը: Վրէ՛նչ հազուագիւտ սէր գիտէ արտայայտել այս բանաստեղծութիւնը,—ասում է Պօլ Ադան իր յառաջաբանում,—ինչ հազուագիւտ պաշտամունք այն իդէանների, որոնք ծագում են կլիմայից, որոնք ծնունդ են առնում բլուրների գեղանկար գալարումներից, ձիւնապատ լեռնակատարների փայլից, հեղեղների մոմոռոցից և ձորերի շնչից:

Պօլ Ադան սքանչացած է մանաւանդ հայ ժողովրդի սիրոյ վրայ դէպի մայր բնութիւնը, դէպի մայր երկիրը: Բնութեան այդ սէրը, չեմ քաշում ասել այդ պանթէիզմը, նա առանձնապէս գտել է սիրային երգերի մէջ: «Սիրային երգերի բնորոշ գիծը մշտական համեմատութիւն է կնոջ և տիեզերքի,—ասում է Պօլ Ադան,—կարծէք թէ սիրահարը աշխատում է իր սիրած աղջկայ իւրաքանչիւր հմայքի մէջ գտնել պարտիզի, երկընքի, լեռների գեղեցկութիւնները. նրա համար նշանուած աղջիկը մի կենդանի խորհրդանշան է սքանչելի և մշտափո-

փոխ երկրի Պաշտամունքի իր իղձը աւելի շուտ դէպի բնութիւնն է ուղղած, քան թէ իր սիրունուն: Կոռ ճամայիչ ձևերի մէջ նա տեսնում է էմբլեման մեղամաղձոտ լճերով, գեղանկար լեռնաշղթաներով, աստղազարդ գիշերներով իր երկրի: Նա կարծէք աշխատում է ընդգրկել աւելի շուտ իր մայրենի հողը, քան թրթռուն մարմինը սիրունու, որի մէջ նա ամփոփում է երևակայութեամբ իր հայրենիքը: Այսպէս է գնահատում և հասկանում ականաւոր Ֆրանսիացին՝ մի օտար մարդ՝ հայ ժողովրդական երգերը: Ի՞նչքան և մխիթարական լինի այդ գնահատութիւնը, բայց երբ ականայ հակադրում ենք այն մեր ժամանակակից և օտարամոլ սերնդի վերաբերմունքին դէպի մեր ազգային մտաւոր գանձերը, դէպի մեր լեզուն, մեր տքնոց, ստեղծագործող և յուսացող ժողովուրդը, վատեցուցիչ խոհերից խուսափել անկարելի է դառնում: Ահա մի գիրք, որ ձեռք բերունա՞ծ առանց ամաչելու կարելի է ներկայանալ օտարին և ասել հպարտութեամբ. «Ես հայ եմ»: Ազգի հոգևոր կեանքը կրծող մեր ժանիքաւոր կոսմօպոլիտները, որոնք սիրում են շաղակրատել աշխարհի բոլոր լեզուներով բացի իրանց սեփականից, լաւ կը լինի, որ գէթ մի անգամ թերթին այս գիրքը: Իսկ ոչ վտանգաւոր է նրանց գեղասիրական ճաշակի համար և ոչ էլ ստորացուցիչ, քանի որ գիրքը գրուած է ոչ հայերէն, այլ Ֆրանսերէն: Ով գիտէ, գուցէ և ընթերցումից յետոյ չ'ամաչեն ասել, թէ մենք էլ ծնունդ ենք այն ժողովրդի, «որի ստեղծագործող հանճարը, — ինչպէս ասում է Պօլ Ադան, — արտայայտուել է բոլոր գեղեցիկ արուեստների մէջ»:

Ա. Ա.

«Ազգագրական Հանդիս»-ի I-X դրերը ¹⁾:

Մի կողմ թողնելով հայկական ընտանիքի կազմութեան վերաբերեալ պ. Լալայեանի ուսումնասիրութիւններն ու եզրակացութիւնները, որոնց գուցէ վերադառնանք մի այլ անգամ, այժմ անցնենք «Հանդիս»-ի միւս նիւթերին:

1. «Բուլանըխ գաւառ ²⁾» Բենսէի. — Այս խիստ հետաքրքրական աշխատութիւնը բռնում է 278 երես: Պատմական մասը շատ թոյլ է և յենուած Հայկի առասպելի վրայ: «Բուլանըխի» մէջ ոչինչ չկայ արուեստական, ամեն բան բնական, պարզ, խօսուն է. այնտեղ կարծես կենդանի ժողովուրդն է

¹⁾ Տե՛ս «Մուրճ», № 3.²⁾ V և VI գիրք: